

"2022թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ" ՄՐՑՈՒՅԹԻ 13-ԴՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ

ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼ

"2022թ. ՀՀ լավագույն հաշվապահ" անվանակարգում հայտարարված մրցույթի 13-րդ պարբերաշրջանի ընտրական 2-րդ փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 10 միավոր:

Խնդրի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 20 միավոր:

Երկրորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Երկրորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2022թ. **հուլիսի 24-ը**: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2022թ. **հուլիսի 25-ին**:

ՈՒՇԱՂՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկեզր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2023 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

"2022թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ" ՄՐՑՈՒՅԹԻ

13-ԴՆ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ II ՓՈՒԼԻ

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

Հարց 1. 2021թ. -ին գնված արտադրական սարքավորման վրա 2021թ. -ին կատարված

կապիտալ բնույթի ծախսի մաշվածությունը կարող է հաշարկվել նվազագույնը

(օգտագործված ամիսների ժամկետն անտեսվում է)

ա. 12 ամիս

բ. 60 ամիս

գ. 96 ամիս

Հարց 2. Կազմակերպությունը 2022թ.-ին կազմակերպությունը եկամուտ չի հաշվեգրել: Տվյալ

պարագայում ֆինանսական ծախսերը շահութահարկաից նվազեցման ենթակա են,

թե ոչ:

ա. Ոչ, քանի որ հարկման եկամուտ առկա չէ,

բ. Այո, անկախ եկամուտ հաշվեգրած լինելու հանգամանքից:

- Հարց 3.** Կազմակերպությունը ֆիզիկական անձից ձեռք է բերել 15 մլն ՀՀ դրամ արժողությամբ տրանսպորտային միջոց: Վերագնահատմամբ պարզվել է, որ տվյալ մեքենայի շուկայական գինը կազմում է 50 մլն դրամ: Տվյալ դեպքում
- ա. Ֆիզիկական անձի մոտ առաջանում է լրացուցիչ վճարման ենթակա եկամտային հարկ 350 000 ՀՀ դրամ $((50\ 000\ 000 - 15\ 000\ 000) * 0,01 = 350\ 000)$,
- բ. Կազմակերպությունը ճանաչում է ներված պարտավորություն 35 մլն-ի չափով,
- գ. Որևէ կողմի մոտ լրացուցիչ հարկեր չեն առաջանա:

Հարց 4 . Արտացոլվում է շահութահարկի հաշվարկման նպատակներով կրեդիտորական պարտքերի դուրս գրումը.

- ա. Դեբետ 521
Կրեդիտ 614
- բ. Դեբետ 521
Կրեդիտ 331
- գ. Դեբետ 942

Հարց 5. Ստացված կանխավճարի մարում ոչ ընթացիկ ակտիվների փոխանցմամբ.

- ա. Դեբետ 523
Կրեդիտ 621
- բ. Դեբետ 523
Կրեդիտ 111
- գ. Դեբետ 523
Կրեդիտ 611

Հարց 6. Կրեդիտորական պարտքերի փոխարկում կազմակերպության սեփական բաժնետոմսերով.

- ա. Դեբետ 521
Կրեդիտ 142
- բ. Դեբետ 521
Կրեդիտ 141
- գ. Դեբետ 521
Կրեդիտ 311

Հարց 7. ՀՀՄՍ 20 "Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում"

ստանդարտի համաձայն՝ շնորհների հետ վերադարձումը կատարվում է՝

- ա. առաջին հերթին՝ տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին, իսկ այդ մնացորդը գերազանցող մասով վերադարձումը դիտվում է որպես եկամտի ճշգրտում
- բ. առաջին հերթին՝ ճանաչվում է որպես ծախս, իսկ չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) մնացորդը գերազանցող մասով վերադարձումը կատարվում է այդ մնացորդի հաշվին
- գ. առաջին հերթին՝ տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին, իսկ այդ մնացորդը գերազանցող մասով վերադարձումը դիտվում է որպես ակտիվ
- դ. առաջին հերթին՝ տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին, իսկ այդ մնացորդը գերազանցող մասով վերադարձումը դիտվում է որպես ծախս:

Հարց 8. ՀՀՄՍ 21 "Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների

հետևանքները" ստանդարտի համաձայն՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ՝

- ա. արտարժույթով դրամային և ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքը
- բ. արտարժույթով դրամային և ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն գործարքի օրվա փոխարժեքով
- գ. արտարժույթով դրամային հոդվածները պետք է ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքը, իսկ ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն գործարքի օրվա փոխարժեքով
- դ. արտարժույթով դրամային հոդվածները պետք է ներկայացվեն գործարքի օրվա փոխարժեքով, իսկ ոչ դրամային հոդվածները ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքը:

Հարց 9. ՀՀՄՍ 19 "Աշխատակիցների հատուցումներ" ստանդարտի համաձայն՝ ինչպես պետք

է ճանաչվեն չկուտակվող փոխհատուցումների գծով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները՝

- ա. բացակայությունների տեղի ունենալու ժամանակ

- բ. հաշվեգրվեն աշխատակիցների կողմից ծառայությունների մատուցմանը (աշխատելուն) գույքընթաց
- գ. բացակայությունների տեղի ունենալու կամ աշխատակիցների կողմից ծառայությունների մատուցման ժամանակ՝ կախված կազմակերպության կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականությունից (կախված նրանից, թե կազմակերպությունը այդ գումարների գծով ձևավորում է պահուստ, թե ոչ)
- դ. բաշխվեն հավասարաչափ աշխատակիցների ակնկալվող ծառայության ժամանակաշրջանում ակտուարային գնահատականների հիման վրա:

Հարց 10. ՀՀՄՍ 8 "Հաշվետու ժամանակաշրջանի գուտ շահույթ կամ վնաս, էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ" ստանդարտի համաձայն՝ երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը գնահատման փոփոխությունից, նման փոփոխությունը՝

- ա. հաշվի չի առնվում
- բ. դիտվում է որպես քաղաքականության փոփոխություն
- գ. եթե գումարը էական է, դիտվում է որպես քաղաքականության փոփոխություն, հակառակ դեպքում՝ որպես գնահատման փոփոխություն
- դ. դիտվում է որպես գնահատման փոփոխություն:

"2022թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ" ՄԲՑՈՒՅԹԻ

13-ԴԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻԻ ՓՈՒԼԻ

Խ Ն Դ Ի Ր Ը

Կազմակերպությունը ստեղծվել է 01.10.2021թ.-ին: Հաշիվ առելով այն հանգամանքը, որ իրացում չեն ունենալու սահմանված ժամկետում ներկայացնում են շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն և 2021 թվականին աշխատում են շրջանառության հարկով: 2022թ.-ին ներկայացնում են ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

1. 01.11.2021թ.-ին ՀՀ-ում ձեռք է բերում հիմնական միջոց 24 000 000 /ներառյալ ԱԱՀ/,
2. 22.01.2022թ.-ին ձեռք են բերում հումք 9 600 000 /ներառյալ ԱԱՀ/,
3. Ստանում են ծառայություններ 8200 000 ՀՀ դրամի /առանց ԱԱՀ/ հարկային հաշիվ, սակայն 15.02.2022թ.-ին տեղեկանում ենք, որ ծառայություն մատուցող կազմակերպությունը ԱԱՀ վճարող չի համարվում,

4. Փետրվար ամսվա ընթացքում կատարում է իրացում մանրածախ եղանակով 12 000 000 ՀՀ դրամի /ներառյալ ԱԱՀ/,
5. 22.02.2022թ.-ին պարզվում է, որ 2-րդ կետում նշված հումքի 50 տոկոսը որակը կորցրել է և իրացման կամ օգտագործման ենթակա չէ,
6. Մատուցել է ծառայություններ 28.02.2022թ.-ին 6 000 000 ՀՀ դրամ /ներառյալ ԱԱՀ/ արժեքով, սակայն ստացողը հրաժարվում է վճարել մատուցված ծառայության ամբողջ արժեքը և կողմերը համաձայնվում են հաշիվը չեղարկել և գրել նոր հաշիվ 03.03.2022թ.-ին: Ըստ էության, համաձայն կողմերի միջև կնքված պայմանագրի մատուցվել և ընդունվել է 6000 000 ՀՀ դրամի ծառայություն:

Հաշվանցման մնացած բոլոր պայմանները համարվում են բավարարված:

Որոշել 2022թ.-ին վճարման/հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարը:

Խ Ն Դ Ի Դ Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

ԱԱՀ Դեբետ

1- ՀՄ –ի մասով	3 334 000
2- Հումք	1 600 000
3- Ծառայություն	<u>1 640 000</u>
	6 574 000

ԱԱՀ կրեդիտ

4- Մանրածախ	2 000 000
5- Վերաձևակեր	760 000
6- Ծառայություն	<u>1 000 000</u>
	3 760 000

Հաշվանցման ենթակա **ԱԱՀ՝ 2 814 000**